

Pierre Loti, pour injurier l'Arménie, peut vanter les Ottomans comme les plus tolérants des hommes.

Pour cette brutale apologie des massacres, je veux citer comme réponse ce passage de Sadi, le plus grand poète de l'Iran :

« Je suis sorti de mon pays, à cause des oppressions des Turcs. Tous étaient en apparence des enfants d'Adam, mais par leurs inclinations sanguinaires et leurs ongles acérés, ils étaient semblables à des loups ».

Pierre Loti Efendi a le pied enchaîné par l'amour de sa chère Aziyadé, et par ses calomnies, il ressemble à la mouche dont la patte reste dans le miel.

Cet Efendi académicien, en bafouant nos cœurs d'Arméniens, fait rôti son haschisch dans la main de ses hanèmes du Bosphore.

O Loti! tu veux tenir une lampe sur la route de la Turquie; c'est trop tard, elle est déjà enfoncée dans son bournier sépulcral.

Le monde entier est troublé par des récits de l'Arménie, la mer immense de nos douleurs ne sera point colmée par une calomnie d'un Pierre Loti Efendi.

Pierre Loti Efendi, tu as joué l'air dolent sur les os de nos martyrs. Grâce à Dieu, tu n'es point Français pour nous Arméniens.

P. S. Erémian



ՔԱԶԱՍԻՐՏ ԹԱԳԱՒՈՐԸ

(Շար. տես. Բզմ 1919 էջ 835)

Անտոնիոսի Պարթևաց ղեմ արշաւանքի պատրաստութիւնն տեսած պարագաներուն մէջ, Արտաւազդի կատարելից պարտակաւ նուիրենք, իբրեւ բարեկամ և դաշնակից, նոյն էին ինչ որ ցոյց տուաւ բանիւ և գործով կրասոսի արշաւանքի ժամանակ. բացի մի նոր հանգամանքէ մը, որ ստեղծուած էր Հոռոմի մէջ, Յուլիոս Կեսարու մահէն յետոյ, Երևակոտի իշխանութիւնն անցեր էր անոր զօրավարներու ձեռքը, մեռնողի զաղափարն յաղթանակելէ ետ, հասարակական իշխանութիւնն աստիճանաբար կ'ամփոփուէր մէկի մը ձեռք՝ Ինիւն համեստ տիտղոսի տակ, և այդ մէկն պիտի ըլլար Հոկտաւիանոս Օգոստոս Կայսրը։ Մինչև այդ զաղափարի իրագործումը նախ ստեղծուեցաւ եռապետութիւն մը. Լեպիտոս շուտով խորագիտի և ուժովի խուլ մրցմանց մէջ ընկղմեցաւ և մնացին իրարու հանդէպ Հոկտաւիանոս և Անտոնիոս իւր փեսան, Հոկտաւիայի մարդը։ Պատմիչը կը խորհրդածեն թէ Օգոստոս՝ զԱնտոնիոս դաւելու դիրքին միջոցը մտածեց այդ զուգաւորութեամբ։ Անտոնիոսի համբաւը ի սկզբան պատկանելի ոյժ մը կը կազմէր. Օգոստոս զգալով իւր սկարութիւնը խորամանկութեամբ յեցաւ Երևակոտի հեղինակութեան վրայ, իսկ Անտոնիոս միայն իւր անձի վրայ։ Երկուքն համաձայնութեամբ բոլոր Հռոմէական երկիրներն իրարու մէջ բաժնեցին։ Օգոստոս առաւ զԻտալիա, արևմտեան աշխարհներն, իսկ Անտոնիոս Լիւրիկէն ալպիներն Դալմացիայի ափերէն բոլոր արևելից աշխարհն Փոքր Ասիա, Միջագետք և Եգիպտոս։ Անտոնիոսի բաժինն թէ մեծ էր և թէ հարուստ ու բարեբեր. ծովերն իրեն ձեռքն էին, որով ամենայն ժամանակ կրնար Հռոմ սովի բռնել։ Փառասիրութիւն, միահեծան իշխանապետութեան ոգին, հաւասարապէս կը կրծէր երկու բաւեկամներու սրտերը. բայց քաղաքագիտ

տուժեան մէջ գերակշիռ դեր կատարողն Հոկտաւիանոսն էր: Իսկ Անտոնիոսն ի ցաւս ցանկութեան կլէնոպատրայի կը խամբէր իւր վարչական իմաստութիւնն և զինուորական կորովն: Հոկտաւիա, կլէնոպատրայի նախանձորդն, արհամարհութիւն կրելով իւր առնէն Անտոնիոսէն, Օգոստոս պատրիարկին քննեց արդար պատերազմ հրատարակելու Անտոնիոսի դէմ, որ զԱրեւելից աշխարհը ի հեծուկս Հռոմէական ծերակուտին և մեծութեան, ստորադրեր էր կլէնոպատրայի, Հռոմի իրաւունքներն փոխանցելու յԱլեքսանդրիա: Երբակոյտն և Հռոմի ժողովուրդն համամիտ համակարծիք էին Հոկտաւիանոսի: Սակայն իմաստունն Հոկտաւիա, փութաց հաշտեցուց ճարենտոնի մէջ երկու բարեկամներն: Հոկտաւիանոս իւր հօր, Յուլիոս Կեսարու, ծրագիրն պարզեց Անտոնիոսի առաջ, Պարթևաց դէմ արշաւելու, Կրասոսի պարտութեան վրէժն լուծելու համար: Անտոնիոս Կեսարու երկրպագուն էր, առանց անոր հանճարն և քաղաքական բարեմասնութիւնն ունենալու: Հոկտաւիանոս պատերազմին պատրաստութեանը օգնեց ղրամով, զէնքով, զինուորով: Անտոնիոս Յուլիոս Կեսարու արծուոյ խոյանքով տարած յաղթութեանց յիշատակներով թևաւորած, մեկնեցաւ յԱսիա, յոյս դնելով որ մէկ հարուածով կարենայ նուաճել զՊարթևներն: Եթէ Անտոնիոս յաջողէր իւր ձեռնարկի մէջ, Հռոմէական աշխարհն ուրիշ կերպարանք պիտի առնէր, և Հոկտաւիանոս թերևս Անտոնիոսի կուսակիցներու ձեռքով դաշոյնաւար կրնար ինկնալ իւր հօր արձանին տակ: Հոկտաւիանոս այդ վտանգը կը նախատեսէր, ուստի իւր կողմէն ծածկաբար ամեն միջոցի պիտի դիմէր որպէս զի Անտոնիոսի արշաւանքը կամ վիժէր կամ Կրասոսի պէս ամօթապարտ ճակատագրի մը հանդիպէր: Ուստի Օգոստոսի շահերն կը ստիպէին զինքն իւր ծրագրի յաջողութեան համար Հայոց թագաւորը, Արտաւազդը իւր կողմը շահիլ, լաւ գիտենալով թէ նա որ կողմը հակի՝ յաղթութիւնն ապահովուած է: Այնուհանդերձ Անտոնիոսի

բաւական զօրութիւն չէր պակսեր յաղթելու Պարթևներուն, եթէ զիտենար Յուլիոս Կեսարու պէս ժամանակէն օգուտ քաղել և յանպատրաստից ինկնալ թշնամոյ վրայ: Եւ նա, պիտի տեսնանք որ այդ յաւակնութեամբ շարժեցաւ և խարուեցաւ, նախ թշնամեաց արթնամտութենէն, և երկրորդ՝ ինքն իւր համար ստեղծեց և փայփայեց իրեն կործանման ՄԻԱԿ ՊԱՏՃԱՌԸ, առ կլէնոպատրա տածած անկարգ սէրը և շամբշութիւնը:

Եթէ Հռոմայեցին ունէր իւր որոշ նպատակը Պարթևաց դէմ պատերազմ հրատարակելու, Արտաւազդ ալ ունենալու էր իր որոշ ծրագիրը իւր երկրի անկախութիւնն ապահովելու: Նա երկու հօր ախոյեաններու միջև, ստիպուած էր միոյն կամ միւսի ազդեցութեան ենթարկուիլ հայրենիքի շահերը պաշտպանելու համար: Գնակալի չէր ոչ մէկի և ոչ միւսի վերջնական պարտութիւնը: Տիգրան մեծի կենդանութեան ժամանակ, Պարթևներն հաշտութիւն կնքելով Պոմպէոսի հետ, մեր թագաւորն ստիպուած խոնարհեցաւ ինքն ալ գլուխ ծռել Պոմպէոսի, որ իւր խահալան շրջալայեցութեամբ և առատաձեռնութեամբը, կարող եղաւ շահիլ Հռոմի ժողովուրդեան բարեկամութիւնը և ցոյց տալ պատերազմի դաշնակից լինելու կարևորութիւնն: Պոմպէոսի և Կեսարու կոռնելու քաղաքական շփոթութեանց ժամանակ, Պարթևներն սկսան յոխորտալ, մանաւանդ Հայաստանի դէմ: Ուստի երբ, թէ և յանրաւր, Կրասոս յարձակեցաւ Պարթևաց վրայ, Արտաւազդ պատրաստակամ գտնուեցաւ օգնելու Հռոմայեցւոյ, ցոյց տալով թէ որ ճանապարհով կարելի էր յաղթել Պարթևաց: Կրասոս արհամարհեց Հայոց արքայի խորհուրդն. Արտաւազդ հաստատ գիտնալով անոր անմիտ արշաւանքի ծախող հետեանքներն, փութաց Պարթևաց հետ հաշտուիլ և ամուսնական կապերով ամրապնդել երկու ազգերու բարեկամութիւնն:

Իսկ Անտոնիոսի ժամանակ տարբեր հանգամանքներու հանդէպ կը գտնուէր Ար-

տաւազդդ։ Անտոնիոս, սոսկական զօրավար մը չէր կրասոսի պէս, այլ միահեծան տէր Արեւելքին, ձեռքի տակն ունէր տասնեակ մանր դաշնակից թագաւորներ, որոց մէջ անկախ և հզօրագոյնն էր Արտաւազդ թագաւորն, ըստ վկայութեան Հռոմայեցի պատմիչներուն։ Բնականաբար Անտոնիոս կը կամենար սիրաշահել այդ հզօր դաշնակիցը։ Բայց Արտաւազդ ալ չէր կամենար անշուշտ բոլորովին անձնատուր լինել անոր պահանջներուն։ Արտաւազդին յայտնի լինելու էր Անտոնիոսի Ասիոյ մէջ անցուցած հակահռոմէական քաղաքական նութիւնն և իմպէրիալիստ ձգտումներն որով ատելի էր դարձած Մերակուտին և երկիւղալի Հոկտաւիանոսի։ Արտաւազդ գիտենալու էր նաև Անտոնիոսի և Հոկտաւիանոսի փառասիրական ձգտումներն և զաղտնի պատրաստութիւնն ըստ քաղաքական պատերազմի, որոյ ելքէն կը կախուէր միոյն կամ միւտարին միազլիսպետ մնալը Հռոմի իշխանութեան։

Այն մուկգին կուսակցական ելեէջներու մէջ Արտաւազդ Զանացած լինելու է այնպիսի դիրք մը բռնել որ որքան կարելի է նուազ փնտով ազատի։ Իրեն բռնելից դիրքը կախուած էր դաշնակցութեան պայմաններէն։ Այդ պայմաններն մեզի յայտնի չեն։ Հռոմայեցի պատմիչներն միայն կը խօսին անոր զոյւղութեան մասին։ Եւ որովհետև նոյն Հռոմայեցի պատմիչներն են որ կ'ամբաստանեն զԱրտաւազդ հաւատադրութեան մէջ, ուստի նախ պէտք է որոշել այդ դաշնակցութեան պայմաններն, որով կարենանք մենք ալ կամ հաւանիլ Արտաւազդի հաւատադրութեան և կամ ջնջել այդ կեղտն մեր մատենագիր թագաւորի ճակատէն։

Հռոմայեցաց դաշնակցութեան երկու տիպար ունինք ի պատմութենէ։ առաջին տիպարն, եթէ դատենք իտալիոյ ժողովուրդներու Հռոմի հետ կոած դաշնակցութենէն, յաղթողի վրայ դրուած պայմաններէն շատ քիչ կը տարբերի։ Նոքա երկու դար դաշնակից պատուաւոր տիտ-

դոսն ունէին, սակայն իրականութեան մէջ սոսկական հպատակներ էին և սոսկաւած էին կոռուելու Հռոմայեցիներու հրամանին տակ։ Հռոմի քաղաքացւոյ իրաւունքներ չվայելելուն համար, բրածեծի կ'ենթարկուէին զանցառուներն և մահուան կը դատապարտուէին։ Այսպիսի դաժնակից չեն եղած Հայերն, անոր համար որ երէք Հայաստան Հռոմի գաւառ չէ եղած և ո՛չ Հայերն Հռոմայեցւոց իրաւագուրկ հպատակներ։ Ուրեմն Հռոմայեցի պատմիչներն եթէ իրենց տեսակէտով, երկրիմի մեկնութեամբ զԱրտաւազդ հաւատադրութեան կը համարեն, այդ իրենց բանն է, բայց ողջամիտ քննադատութիւնն՝ զայն անիրաւութիւն և զրպարտութիւն կը համարի։ Վասն զի այս տեսակ դաշնակցութեան կը հակասէ Պոմպէոսի Հռոմի Հրապարակի և Մերակուտի մէջ տուած վկայութիւնը Մեծն Տիգրանի համար թէ՛ ԲԱՐԵԿԱՍՏ Է ՀՈՌՄԻ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ԵՒ ԴԱՆՆԱԿԻՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ, իբրև ազատ և անկախ երկրի մը թագաւոր։ Թէ և այսպիսի վկայութեան հետք մը ևս չկայ մեր տոհմային պատմութեան մէջ, սակայն հասկանալու համար, անոր պաշտօնական բանաձևն կը գտնենք Սուրբ Գրքին մէջ։ Այս է դաշնակցութեան երկրորդ տիպարը։

Մակարայեցիք թէ՛ բարեկամ և թէ՛ պատերազմի դաշնակից կը կոչուին Հռոմայեցւոց։ Այս դաշնադրութիւնն երկու ազատ կողմերու միջև հաստատուած է և պարտաւորեցուցիչ երկուքին։ դաշինք դրուած է յարձակողական և պաշտպանողական հիմքերու վրայ, այսինքն եթէ դաշնակիցներու մէկու վրայ յարձակի թշնամին, միւսն պարտական է օգնութեան երթալ։ Իսկ եթէ դաշինք կողմերէ մէկն է յարձակող ուրիշ ազգի վերայ, դաշնակիցն ազատ է օգնութեան երթալէ։

Այդ Հրէից հետ այսպիսի դաշն դնելէն յետոյ, չէ կարելի այլ ևս տարակուսիլ որ ԲԱՐԵԿԱՍՏ Հայոց ազգին հետ, Հռոմայեցին ալազգ պայմանադրած ըլլայ և Հայերն ալ յանձնառու եղած ըլլան։ Որովհետև պատերազմի դաշնակիցն, Արտաւազդը, չէ

կարելի երևակայել որ նուազ իմաստու-
թեամբ դաշնակցներ է, դաշինքին բոլոր
ծանրութիւնն իւր վրայ բառնալով, որով
զինքն ի վտանգի դրած ըլլայ յամենայն
դէպս միշտ հաւատադրութ հռչակուելու
Հոռմայեցիներէ: Ուստի կրնանք հաւատարմ
կերպով վստահիլ, որ Հայոց թագաւորի և
և Հոռմի ժողովրդեան միջև՝ Մակարայեցոց
դաշինքին յար և նմանը դաշնադրուած
ըլլայ, որ այնքան տրամաբանական մի
գործ է, որ ի սկզբանէ մինչև ի դարն նոյն
օրինօք դրուած են դաշինքներն բարեկամ
ազգերու մէջ: Այս աշխատք լինելով, արդ
տեսնանք թէ Արտաւազդ պարսը ունէ՞ր
օգնել Հոռմայեցոց և կողմիւ Անտոնիոսի
հրամանի տակ թէ ոչ: Ըստ դաշնադրու-
թեան օրինաց ոչ, վասն զի յարձակո-
ղական կողմն Հոռմայեցոց էր, Պարթևներն
Վինդետիոսէ երեք անգամ պարտութիւն
կրելով, Ասորիք և Միջագետք թողին
Հոռմայեցոց և քաշուեցան իրենց հին
սահմաններու մէջ: Կրասոսի վրէժն առեր
էին Բակուր արքայորդւոյ մահուամբ, և
երկու ազգերը խաղաղութեան մէջ էին:

Արտաւազդ չէր կրնար միանալ Անտո-
նիոսի յարձակողական պատերազմին, ա-
ռանց հաւատադրութ լինելու առ Պարթևս,
որոց հետ Կրասոսի ժամանակէն հաշտու-
թիւն կոհեր և բարեկամութեամբ կապուեր
էին երկու արքունիքն: Անտոնիոս պէտք
էր գիտնալ զայս, ուստի և ոչ պիտի
սիրտ ընէր հրաւիրելու զնա ի նիզակա-
կըցութիւն ընդդէմ Պարթևաց:

Եւ արդարև եթէ մանր միտ դրուի
Պլուտարքոսի պատմածին, յայտնի կը
տեսնանք որ Արտաւազդ մասնակից չէ
եղած Անտոնիոսի արշաւանքին. ուստի ինչ
որ ի ֆրանս Հայոց թագաւորին գրուած է,
եկամուտ են Պլուտարքոսի մէջ Անտոնիոսի
շնթող Վիպասաններէն քաղելով: Քիչ
յետոյ պիտի տեսնենք թէ երբ, ուր և
նմ թելադրութեամբ կազմուեր է այդ
առասպելը, արդարացնելու համար իրենց
հաւատադրութեամբ զքաջախիտ թագա-
ւորը կալանաւորելու վատագգի քաղաքա-
կանութիւնը:

ՄԱՐԿՈՒ ԴԵՐՄԱՅԱՅ

ԲԱԿԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ

ՆԱՊԱՍՏԱԿԻ ԵՒ ԶԱԳԱՐԻ

ԶԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ

ՃԱԿԱՆՆԵՐԸ փոքր, ստնաւոր կենդա-
նեաց դասին կը պատկանին, կրծողներու
կարգին և նապաստակներու տեսակին:

Կրծողները կը բաղկանան փոքրահասակ
կենդանիներէ, որոնք՝ հետեւալ հասարակաց
նկարագիրը ունին: Ախաներու կազմը
այնպէս է՝ որով կրնան թէ կրծել և թէ
կտրել. շնատամուկն չունին, բայց ունին
երկու զոյգ հեքցատամներ որոնցմէ երկուքը
վերը և երկուքը վարի կողմը կը գտնուին,
որոնք՝ առջևը կտրեթարդ ձև մը կուտան,
և կիտուածային են. ակուններուն ներքին
երեսը կիտուածային չէ, անոր համար շատ
և շուտ կը մաշին, բայց անոնց աճումն
ալ շատ և շուտ է: Աղօթի ակունները առ-
ջեղ կիտուածային ծալքեր ունին, որոնց
թիւը իրաքանչիւրի վրան վեց հատ է.
Իսկ ամբողջ ակուններուն թիւը 16 հատ
բացի կաթի ակուններէն: Կզակի զնդեր-
ները շատ բացուած են, բերաննին փոքր
է, ծնոտի կապը շատ նեղ և անոր հա-
մար ծամելու ժամանակ կողմնակի շար-
ժում կու տան անոնց, ետէն դեպ յառաջ
նրբանագնաց են, մատները ազատ, շար-
ժուն, որ կամ եղունգով և կամ փոքր
կոճերով կը վերջանան:

Այս համառօտ նկարագիրը թէ նապաս-
տակին և թէ ճագարին յատուկ է, որով՝
շատ դուրաւ կարելի է իրարու հետ չգիտ-
թել. բայց՝ ուրիշ շատ մը անգամազնեա-
կան և քնախօսական յատկութիւններ ալ
ունին, որոնք՝ որոշակի իրարմէ կը զանա-
զանեն և երկուքն ալ տարբեր տեսակներու
կը վերածեն: Այս տարբերութիւնները շա-
տերուն ծանօթ չէ, անոր համար կ'ուզեմ
մի քանի տողերով երևան հանել զանոնք,
մասնաւորապէս այն բանին համար որ,
շատեր զճագարը նապաստակի ընտանի-
քէն կը համարին, և երբեմն զոյններու նմա-